Հայաստանի Հանրապետություն
Արմավիրի Մարզ
Գրիբոյեդովի Գյուղապետարան

Республика Армения
Армавирский Марз
Муниципалитет Села
Грибоедова

N 71
07 07 2014թ

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզիԳրիբոյեդով համայնքի ղեկավարի 2014 թվականի հունիս ամսվա ընթացքում ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր 3 թերթ:

Գրիբոյեդով
համայնքի ղեկավար Վ. Գրիգորյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.57/7810-14
07 07 2014.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 12 » հունիսի 2014թ N 26-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԵՆՔ- ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱՌՆԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին, 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1-ի կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի N1328-Ն որոշմամբ և հիմք ընդունելով համայնքի բնակիչ Գառնիկ Գրիգորի Դանիելյանի դիմումը՝ Արմավիրի մարզի Գրիբոյեդով գյուղում Փափազյան 2 հասցեում գտնվող իրեն պատկանող 0.1618 հա հողամասը և տունը օրինականացնելու խնդրանքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդովի գյուղական համայնքի Փափազյան 2 հասցեում գտնվող 1990 թվականին կառուցված բնակելի տունը և դրան կից բնակելի նշանակության օժանդակ շինությունները, դրանց կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասերը՝1618 քառակուսի մետր համարել 1957 թվականի ծնված քաղաքացի Գառնիկ Գրիգորի Դանիելյանի, որպես սեփական գույքի տիրապետողի, սեփականություն:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

3. Սույն որոշումը սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանմունքում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2014 թվականի հունիսի 12
գ. Գրիբոյեդով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 5 » հունիսի 2014թ N 10 - Ա

ԱՆԱՀԻՏ ՔԵՇԻՇ -ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածով,161-րդ հոդվածի 2-րդ մասով,Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N1384-Ն որոշմամբ,հիմք ընդունելով Արմավիրի մարզի Գրիբոյեդով համայնքի ղեկավարի 2013թվականի նոյեմբերի 1-ի N24-Ա կարգադրությունը և Անահիտ Քեշիշ-Ղուկասյանի 2014թ-ի հունիսի 3-ի դիմումը.

կարգադրում եմ՝

1. 2014 թվականի հունիսի 10-ից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդովի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար Անահիտ Քեշիշ-Ղուկասյանին տրամադրել 2014 թվականի ամենամյա արձակուրդից՝ 15 (11 նվազագույն, 4 լրացուցիչ) օր:

2. Անահիտ Քեշիշ-Ղուկասյանին աշխատանքի մեջ համարել 2014 թվականի հուլիսի 1-ից:

3. Աշխատակազմի քարտուղար Անահիտ Քեշիշ-Ղուկասյանի պարտականությունները ժամանակավորապես վերապահել աշխատակազմի առաջատար մասնագետ Անի Ենոքյանին /3.1-2 /:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2014 թվականի հունիսի 5
գ. Գրիբոյեդով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 9 » հունիսի 2014թ N 11 - Ա

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով, « Առևտրի և ծառայությունների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 17 ' -րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդովի գյուղական համայնքում առևտրի և ծառայությունների ոլորտում հսկողություն իրականացնելու նպատակով.

կարգադրում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Գրիբոյեդովի գյուղական համայնքում առկա տնտեսվարող սուբյեկտների մոտ հսկողության իրականացումը վերապահել աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ Սուրեն Գրիգորյանին:

2.Հսկողություն իրականացնող աշխատակից Սուրեն Գրիգորյանին՝սույն կարգադրությամբ նախատեսված հսկողությունն իրականացնել հունիս ամսվա ընթացքում՝յուրաքանչյուր տնտեսվարող սուբյեկտի մոտ մեկ աշխատանքային օրվա ժամկետում: Արդյունքների մասին զեկուցել համայնքի ղեկավարին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ԳՐԻԲՈՅԵԴՈՎ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2014 թվականի հունիսի 9
գ. Գրիբոյեդով